Լիրանշահ, Տաբարսարանշահ, Ֆիլանշահ, Ջարշանշահ եւ Մագքտաց տէրր (ի Նշան հնագանդութեան) եկան նորա մօտ։ Ապա Մասլամայ արշաւեց Բաբ (Դերբենդ) քաղաքի վերայ եւ նուաճեց զայն. ամրոցում նստած էին 1000 տուն խազարք, որոց նա պաշարեց, նետելով նոցա վերայ քարեր եւ քարի ձեւով պատրաստած երկաթներ։ Երբ այդ եւս չօգնեց, նա դիմեց դէպի այն աղբիւրը, որտեղից Անուշիրվան ջուր էր տարած դէպի նոցա ջրի պահարանը. հրամայեց գենուլ եղներ եւ ոչխարներ եւ նոցա կեղտը եւ անգժատի հիւթը՝ աղբիւրի մէջ նետել. մի գիշերուայ ընթացքում ջուրը որդոտեցաւ, հոտաւ եւ ապականեցաւ. իսկ երբ գիշեր եղաւ, թշնամիք թողին ամրոցը եւ փախան։ Մասլամայ Ի. Աբդուլմալիք բնակեցրեց Բաբ-էլ-աբուաբ քաղաքում 14.000 գլուխ Ասորիքի բնակիչներից, նշանակելով նոցա ռոճիկ. մինչեւ օրս էլ Բաբի բնակիչք այլապէս թոյլ չեն տալիս (նոր) կառավարչին քաղաք մտանել, բայց եթէ նա իւր հետ (բերէ) դրամ՝ նոցա մէջ բաժանելու համար։ Շինեց ուտելիքի եւ գարու շտեմարաններ, դինատուն, հրամայեց լեցնել ջրի պահարանը եւ պայծառեցրեց քայքայուած քաղաքը։ Մասլամայի հետ էր Մրբվան Ի. Մահմեդ, որ նոցա հետ միասին պատերազմեցաւ խազարների հետ եւ մեծ քաջութիւն ցոյց տուեց ճակատամարտերում։

Հիշամ կառավարիչ նշանակեց Մասլամայից յետոյ Սայիդ Ալհարաշին, որ մնաց այստեղ երկու տարի։ Նրանից յետոյ կառավարեց Մրբվան Ի. Մահմեդ, որ բնակեցաւ Կիսալ՝ում. նա նորոգեց դաւառիս քաղաքը, որ Պարտաւից 40, իսկ Տփղիսից 20 փարսախ հեռի է։ Մտնելով խազարաց երկիրը Ալանացոց դրան կողմից Ասիդ Ի. Զաֆիր Ալսուլամիի՝ եղեգի հօր՝ եւ Ջաբալի Բաբ-

---

1 Assa foetida, silphium.